ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(12)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№2(12)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№2(12)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(12)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրամագիտություն

Ալեքսանդր Հակոբյան

Արխիպելագից դեպի մայրցամաք. «Հայաստանի դրամագիտություն» հասկացության շրջանակը (*ռուս.*) 8

Ժակ Նուրպեկլեան

Հին դրամների՝ պատմական և աշխարհագրական տեղեկությունները ստուգելու ունակությունը (*անգլ.*) 23

Հաամիկ Մարգարյան

Հայաստանի անձնավորումը Պարթևական հաղթակամարի վրա՝ ըստ Օգոստոս կայսեր մ. թ. ա. 19 – 16 թթ. հաղթադրամների (*ռուս.*) 27

Մաքսիմ Եվադեան

Հայոց թագուհի Էրատոյի մասին. պատմական և դրամագիտական ուսումնասիրություն (*անգլ.*) 38

Մաքսիմ Եվադեան, Հովանն Սիմոնեան

Մարիամ Կարսեցու չհրապարակված կնիքը և Բագրատունիների տան՝ Դավիթյան ծագման հավակնությունը (*անգլ.*) 47

Շահէն Յովսէփեան

Պարսկական դրամներ՝ թողարկված Երևանում (*հայ.*) 55

Ռոբեն Վարդանյան, Արմինե Զոհրաբյան, Համլետ Պետրոսյան

Դրամներ Արցախի Տիգրանակերտի պեղումներից (*հայ.*) 74

Ռոյ Առաքելյան

Ակնարկ Տիգրան II-ի դրամական թողարկումների ժամանակագրության մասին (*անգլ.*) 87

Մեյեդ Օմիդ Մոհամմադի, Սաիդ Սոլեյմանի

Հատվել է Իրանի Հյուսիսում. «Մուհր» մակադրոշմներ արծաթե դրամների վրա (*անգլ.*) 95

Վեռա Բոյան

Հայաստանից գտնված Հնդկաստանի Մեծ մողոլների դրամները և դրանց դերը միջազգային առևտրում (*հայ.*) 106

Վլադիմիր Գորոնչարովսկի, Անդրեյ Տերեշչենկո

Տավրիկյան Խերսոնեսի հարավային արվարձանում հայտնաբերված՝ բյուզանդական կայսր Արտավազդի հազվագյուտ սեմիսի մասին (*ռուս.*) 114

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Հակոբյան, Լուսինե Ղուշչյան

Մետաղադրամը իրերի վրա. Ռուսաստանի ազգագրական թանգարանի հավաքածուից չորս հայկական զարդերի դրամագիտական վերլուծություն (*անգլ.*) 122

Աստղիկ Իսրայելյան

Դրամների մոգական և գեղագիտական արժեքները (*հայ.*) 132

Արտակ Ասատրյան

Պղնձարդյունաբերությունը և պղնձագործությունը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին – 20-րդ դարի սկզբին (Պատմաազգագրական համառոտ ուրվագիծ) (*հայ.*) 152

Լիլիա Ավանեսյան, Վեռա Բոյան

Գորգը և տեքստիլ ապրանքները Ռուսաստանի հետ հայ վաճառականների առևտրում 17-րդ դարի կեսին – 18-րդ դարի սկզբին (*ռուս.*) 166

Կարինե Բազեյան, Գրիգոր Աղանյան

Մետաղադրամը որպես զարդ Բարձր Հայքի և Շիրակի կանանց ավանդական հագուստի համալիրում (*հայ.*) 180

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան

Դրամական անվանումների արտացոլումը հայկական վիմագրերում (*հայ.*) 190

Արմինե Ջոհրաբյան, Բորիս Գասպարյան, Անի Ադիգյոզալյան

Կշռաքար՝ հայտնաբերված Արտաշատ մայրաքաղաքի տարածքից (*հայ.*) 206

Ռոբերտո Դան, Անանարիտա Ս. Բոնֆանտի

Նախնական դիտարկումներ Հայաստանի պատմության թանգարանում պահվող Ուրարտական թագավորական թասերի նոր ուսումնասիրության մասին (*անգլ.*) 217

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան, Գագիկ Սարգսյան, Լևոն Մկրտչյան

Ճանապարհային ցանցի գործարկումը բրոնզ-երկաթեդարյան Սյունիքում՝ խոշոր բնակավայրային ագլոմերացիաների գոյության պայմաններում (*հայ.*) 225

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Ժիրայր Քրիստրիանեան

Ռոբերտ Վ. Էդվարդսի հայկական և հարակից մինչհետմիջնադարյան ժամանակաշրջանի դրամների հավաքածուն՝ Կիլիկիայում գտածոների վայրերի փաստագրված տվյալներով (*անգլ.*) 242

Ռոբեն Վարդանյան, Արմինե Ջոհրաբյան, Հասմիկ Հովհաննիսյան

Ոչ թանգարանային դրամագիտական թվային շտեմարան թանգարանում (*հայ.*) 260

Զարուհի Բարսեղյան

«Պահպանելով անցյալը և ներկայացնելով ներկան՝ կառուցում ենք ապագան». ՀՀ կենտրոնական բանկի այցելուների կենտրոն (*հայ.*) 267

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 271

DOI:10.56653/18290361-2023.12-55

Շահէն Յովսէփեան
shahenhovsepian@gmail.com

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ՝ ԹՈՂԱՐԿԻԱԾ ԵՐԵԻԱՆՈՒՄ*

Հիմնաբառեր: Պարսկաստան, Սեֆեան, Աֆշար, Զանդ, Ղաջար, Երեւան, Շիա:

Ներածութիւն

Մետաղադրամները կարևոր դէր ունեն անցեալը ուսումնասիրելու համար, որոնք օգնում են պարզել տեղի ունեցած իրադարձութիւնները, պատկան ժողովուրդի մշակոյթը և արուեստը, տնտեսական վիճակը և հաւատքը: Իսկ իւրաքանչիւր պետութեան դրամների ի յայտ գալը այլ պետութեան տարածքում, վկայում է այդ երկու պետութիւնների մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները, դա կարող է լինել նաւճման կամ վաճառականութեան արդիւնքում:

Հայաստանում մի քանի պետութիւններ թողարկել են իրենց դրամները, ինչպէս Պարսկաստանը, որը 16-րդ դարից մինչև 19-րդ դարի սկիզբը Երևանում (Սեֆեան, Աֆշար, Զանդ և Ղաջար), Նախիջևանում (Սեֆեան, Աֆշար և Զանդ), Օրդուբադում (Սեֆեան), Արճէշում (Սեֆեան), Վանում (Սեֆեան), Բիթլիսում (Սեֆեան) և Շուշիում (Զանդ և Ղաջար) թողարկել է իր պետական դրամները, ուստի սոյն ուսումնասիրութիւնը նուիրուած է միայն Երևանում թողարկուած Պարսկական չորս շրջանների դրամներին:

15-րդ դարի վերջին Հայաստանի արևելեան և արևմտեան սահմաններին են մօտենում թուրք Օսմանական և պարսիկ Սեֆեան պետութիւնները: 1502 թ. պարսից Շահ Իսմայիլ Ա. Սեֆեան (1501 – 1524 թթ.) թագաւորը պարտութեան մատնելով Ակ-Կոյունլուներին՝ գրաւում է Երևանը, որից յետոյ սկսում է թուրք-պարսկական երկարատև պատերազմները:

Հայաստանում յայտնուած երկու մահմեդական կայսրութիւնները, բացի քաղաքական, տնտեսական և ռազմական մրցակիցներ, նաև Իսլամ աշխարհում դաւանական մրցակիցներ էին, որովհետև Օսմանական սուլթաններին յաջողել էր ձեռք բերել Իսլամ աշխարհի առաջնորդութիւնը, ուստի Շահ Իսմայիլ Ա.ը վերջ տալու նպատակով նրանց ազդեցութիւնը իր տիրապետութեան տակ գտնուող մահմեդականների վրայ, Շիա դաւանանքը Պարսկաստանի պետական կրօն յայտարարեց, որով վերջ է տալիս Օսմանական սուլթանների կրօնական մենաշնորհին:

* Ստացվել է 17.07.2023 թ., ուղարկվել է գրախոսման 19.07.2023 թ., ընդունվել է տպագրության 01.11.2023 թ.:

Մահմեդական երկրների սովորութեան համաձայն, որևէ թագաւոր անկախ էր համարւում երբ նրա անունը յիշատակւում էր ուրբաթօրեայ աղօթքի ժամանակ և նրա անունով դրամ էր թողարկում, այսինքն դրամը պատկան տիրակալի ինքնիշխան լինելու նշան էր, բայց 16-րդ դարից փոխւեց մետաղադրամի կարգավիճակը և Սեֆեան Պարսկաստանի համար դառաւ միջազգային առևտուրի կարևոր գործոն, որի հետևանքով հիմնում են բազմաթիւ դրամահատարաններ, թողարկելու նպատակով մեծ քանակութեամբ դրամներ:

Բոլոր դրամահատարանները գտնւում էին թագաւորի կողմից նշանակւած պատասխանատուի հսկողութեան ներքոյ, որը կոչւում էր Մոիր-ալ-մամալեք, և արքունիքում կարևոր տեղ էր զբաղեցնում: Նա էր ճշտում դրամների թողարկման բոլոր մանրամասները և իւրաքանչիւր դրամահատարանի համար նշանակում պատասխանատու: Նրա պարտականութիւններից էին՝ հսկել դրամների կնիքների պատրաստման և մաշւած կամ նախկին թագաւորի կնիքների ոչնչացման գործին: Նկատի առնելով, որ դրամի թողարկումը խիստ կարևորութիւն ուներ պետութեան համար, ուստի որևէ դրամահատարանի պատասխանատուի կողմից կատարւած օրինազանցութիւնը ունէր պատիժ, կուրացնելուց մինչև գլխատում:

Ոսկէ դրամները թողարկւում էին միայն արքունիքի պահանջով, թագաւորի գահ բարձրանալու կամ ինչ որ առիթով և չէին գտնւում շրջանառութեան մէջ: Ժան Շարդէնը (1643 – 1713 թթ.) իր յուշերում պատմում է, որ «Բնակչութեան մօտ հնարաւոր չէր գտնել ոսկէ դրամներ, որովհետև այն թողարկւում էր թագադրման կամ Նոռուզի առիթով թագաւորի հրամանով և պահւում գանձարանում, որը ինչ որ առիթով թագաւորը նւիրում էր իրեն ծառայութիւն մատուցած որևէ մէկին»:

Սեֆեան շրջանից, Պարսկաստանը սկսեց մետաքս արտահանել Եւրոպա, յատկապէս Շահ Աբբաս Ա. (1587 – 1629 թթ.) թագաւորի ժամանակ, որի դիմաց ներմուծւում էր տարբեր ապրանքներ և մեծ քանակութեամբ արծաթ, որը օգտագործւում էր դրամ թողարկելու համար: Մինչև 17-րդ դար ոսկու պակասի հետևանքով, ոսկէ դրամները շատ քիչ էին, ուստի Վենետիկից և Իսպանիայից սկսում են ոսկի ներմուծել: Մետաքսի արտահանումը, ոսկու և արծաթի ներմուծումը կատարւում էր Նոր Ջուղայի հայ խոջաների միջոցով:

Պղնձէ դրամները թողարկւում էին տարածաշրջանի խանի միջոցով և օգտագործւում սոյն խանութեան տարածքում, որոնց վրայի գրութիւնները շատ աւելի պարզ էին համեմատած արծաթէ դրամներին: Եթէ արծաթէ դրամները պետական դրամներ էին համարւում, պղնձէ դրամները տեղական օգտագործութիւն ունէին: Խանի հրամանով իւրաքանչիւր Նոռուզին, հաւաքում էին պղնձէ դրամները և նոր դրամներ թողարկում:

Դրամների մէջ ամենաշատը պղնձէ դրամներն էին շրջանառութեան մէջ, որի հետևանքով շատ էին մաշւում: Իսլամի օրենքի համաձայն արգիլւած է կենդանու և մարդու պատկերի տեղադրելը դրամների վրայ, բայց Պարսկական մշակոյթի ազդեցութեան ներքոյ պղնձէ դրամների վրայ կան ինը տեսակ պատկերներ, որոնք են՝ մարդկային (ձիաւոր), կենդանիներ (այծ, ուխտ, կապիկ, ...), թռչունների, ձկան, բոյսերի, 12 կենդանակերպ նշանների, որսի տեսարան, առասպելական էակներ (առիւծ մարդի գլխով, ...) և մի քանի պատկերներ մէկտեղ (արև ու առիւծ,

ձուկ և թռչուն, ...): Պղնձէ դրամների մեծ մասի վրայ Պարսկաստանի տիրակալի անունը և թողարկման թւականը նշած չէ, ուստի դժւար է ճշտել նրանց թողարկման ժամանակը:

Շահ Թահմասբ Ա. (1524 – 1576 թթ.) թագաւորի հրամանով 1555 թ. կայսրութիւնում նոր վարչական բաժանումներ է կատարւում: Արաքս գետից հիւսիս ընկած տարածքներում կազմւում է Երևանի կամ Չոխուր Սաղդի, Ղարաբաղ-Գանջաի, Նախիջևանի և Շիրւանի խանութիւնները և Երևանի առաջին խան է նշանակւում Մոհամմադ խանը, որը յայտնի էր Թոխմախ խան անունով:

Սեֆեան շրջանից սկսած կարևոր քաղաքներում գործել է պետական դրամահատարաններ, որոնց թիւը Սեֆեանի ժամանակ 66, Աֆշարի ժամանակ 34, Զանդի ժամանակ 21 և Ղաջար երկրորդ թագաւորի ժամանակ 31 են, որոնցից մէկը մնայուն՝ Երևան քաղաքն է եղել: Պարսկաստանում իւրաքանչիւր քաղաք իր կրօնական կամ պետական դիրքից, ունեցել է իր երկրորդ անունը, որը ևս յիշատակւել է որոշ դրամների վրայ, օրինակ Թաւրիզը, Թեհրանը և Սպահանը կոչւում էին Դար-ալ-սալթանէ (دار السلطنه թագաւորութեան կենտրոն), Ղոմը՝ Դար-ալ-մոմենին (دار المومنين հաւատացեալների կենտրոն), Երևանը Չուխուր Սաղդ (چخورسعد թուրքերէն է և նշանակում է ուրախութիւններով ինչ որ փոս ընկած տարածք) և այլն:

Մետաղադրամների պաշտօնական արժոյթը Դինար է եղել, որը ունի լատինական արմատ և Պարսկաստան է մուտք գործել արաբների տիրապետութեան ժամանակ և մինչև 20-րդ դարի սկիզբը օգտագործւել է, որից յետոյ այն փոխւել է Ռիալի ու մինչև օրս պահպանւում է:

Իւրաքանիւր մետաղադրամ ունեցել է իր անունը, որոնք Սեֆեան, Աֆշար և Զանդ թագաւորութիւնների ժամանակ համարեայ նոյն անուններն են և դրամների քաշերը որոշ տարբերութիւններով նոյնն են պահպանել (նկ. 1):

Իսկ Ղաջարական շրջանում դրամների անունները փոփոխութիւն են կրել, որոնց մի մասի անունները համընկնում է նրանց արժոյթի հետ, իսկ նախկին անունները օգտւելու պարագային, արժոյթները նոյնը չեն պահպանւել (նկ. 2):

Երևանի խանութիւնը Պարսկաստանի համար յատուկ կարևորութիւն ունէր, ուստի Սեֆեան Շահ Թահմասէբ Ա. թագաւորի հրամանով Երևան քաղաքում հիմնւում է պետական դրամահատարան, որը անխափան իր գործը շարունակում է մինչև 1826 թ. և թողարկւած դրամների վրայ նշած է Իրաւան (ایروان) անունը:

Հարկ է նշել, որ սոյն յօդւածում, Երևանում թողարկւած իւրաքանչիւր թագաւորի դրամներից, միայն մէկ օրինակ է ներկայացւել:

Ա) Սեֆեան թագաւորութիւն

Շէյխ Սաֆի Էդին Արդաբիլին, որի գերեզմանը գտնւում է Իրանի Արդաբիլ քաղաքում և Շիա մահմեդականների ուխտատեղիներից է, Սեֆեան տոհմի հիմնադիրն է, որը հոգևորական է եղել և այդ իսկ պատճառով Սեֆեան թագաւորները կրել են Մորշեդ անւանումը, որը տրւում է հոգևոր ղեկավար-դաստիարակներին: Նրանք Շիա-Ալաւիական դաւանանքի հետևորդ լինելով իրենց համարում էին Շիա դաւանանքի հիմնադիր՝ առաջի իմամ՝ Ալիի շառաւիղը:

Սեֆեան թագաւորութեան ժամանակ Շիա դաւանանքի ազդեցութիւնը ոչ միայն իր արտացոլումը ունեցաւ դրամների վրայ, նաև պարսկական մշակոյթի մէջ արմատաւորուեց և կրօնը քաղաքականութեան հետ մէկտեղելով, միասնականութիւն ստեղծեց Սունի դաւանանքով օսմանցիների և ուզբէքների դէմ: Սեֆեան թագաւորները դրամների վրայ նշելով Աստուծու, մարգարէի և 12 իմամների կողքին իրենց անունը, նպատակ են ունեցել հասարակութեանը փոխանցել իրենց խորը հաւատքը հանդէպ Շիա դաւանանքին, նրա դրօշակակիր լինելը նաև նրանց միջոցով օրինականացնել իրենց իշխանութիւնը, նկատի առնելով, որ մետաղադրամները շրջանառւում էր հասարակութեան մէջ և սոյն գաղափարի տարածման ամենալաւ հնարաւորութիւնն էր:

Սեֆեան թագաւորները դրամների միջոցով իրենց ներկայացրել են առաջին իմամ՝ Ալիի ծառայներ, իսկ դրամների վրայ նշւած Շահ բառը, որը նշանակում է թագաւոր, չեն տեղադրել իրենց անունից յետոյ, որը աւանդոյթ է եղել Սեֆեան տոհմից առաջ և յետոյ բոլոր թագաւորների մօտ և այն օգտել են որպէս անուն, յիշատակելու համար առաջին իմամին:

Ըստ Շարդենի վկայութեան, Սեֆեան թագաւորութեան ժամանակ Պարսկաստանում երէք լեզուներ է օգտագործել՝ պարսկերէն, որը պետական և գրականութեան լեզուն էր և Սասանեան կայսրութեան անկումից յետոյ, առաջին անգամ օգտուել են դրամների վրայ, արաբերէնը՝ կրօնական լեզուն էր և ադրբէյջաներէն, որը բանակում օգտագործուող լեզուն էր:

Դրամների վրայ ինը տեսակ շրջանակներ կան, իսկ գրութիւնների արանքում նշաններ, որոնք Թողի են կոչւում և դրամի կնիքը պատրաստող վարպետների ստորագրութիւններն են (նկ. 3):

Սեֆեան թագաւորութեան բոլոր արծաթէ և ոսկէ դրամների դիմ երեսը Իսլամի կարգախօսն է, որով ներկայացնում է Աստուծուն, Մոհամմադ մարգարէին և նրա տեղակալ՝ Ալիին, որը Շիա դաւանանքում կոչւում է Շահադաթէյն, այսինքն վկայութիւն, որով հաստատում է թէ Ալլահը միակ աստուածն է, նրա մարգարէն Մոհամմադն է և նրա տեղակալն՝ Ալին է: Սեֆեան դրամների մեծ մասում Շահադաթէյնի շուրջը նշւած է 12 իմամների անունները (Նկ.4): Հարկ է նշել, որ Սունի դաւանանքի հետևորդները ինչպէս օսմանական թուրքերը, իրենց դրամների վրայ օգտւում են Շահադաթէյնից առանց յիշատակելու Ալիի և իմամների անունները:

Դրամների դարձ երեսում ներկայացւել է թագաւորը, նրա տիտղոսը և հաւատքը Շիա դաւանանքի առաջին իմամին: Սկզբնական շրջանում Սեֆեան դրամների վրայի գրութիւնը ազդւած լինելով Ակ-Կոյունլու և Կարա-Կոյունլու դրամներից, Սոլս տեսակի տառերով են, որը դրամի միակ զարդարանքն է, իսկ Շահ Աբբաս Ա. ժամանակ փոխում են տառատեսակը և օգտւելով Նաստալիղ տառատեսակը, որը աւելի նուրբ և գեղեցիկ է և դրամի մակերսում ազատ տեղ է առաջանում, որտեղ պատկերում են ծաղիկներ: Սեֆեան որոշ դրամների գրութիւնները շատ ընդարձակ են, բայց կարողացել են վարպետօրէն տեղաւորել դրամի մակերեսին:

Այժմ կը ներկայացնենք Երևանում թողարկւած Սեֆեան դրամները, որոնց դիմ երեսի գրութիւնը բոլոր դրամներում կրկնւում են, ուստի միայն անդրադարձ կունենանք դարձ երեսի գրութիւններին:

Շահ Թահմասէբ Ա. 1524 – 1576 թթ. (Հիջրի 930 – 984 թթ.) – Շահ Իսմայիլ Ա.ից յետոյ գահ բարձրացաւ Շահ Թահմասէբ Ա.ը, որի ժամանակ սկսեց Երևանում դրամ թողարկել: Նա իրեն տուել էր «Բանդէ Շահ-է-Վլայաթ» (بنده شاه ولايت) անուանումը, որը նշանակում է Շահ-է-Վլայեթի ծառայ, իսկ Շահ-է-Վլայեթը յիշատակութիւն է Շիա դաւանանքի հիմանդիր՝ Իմամ Ալիին:

Շահ Թահմասէբի թագաւորութեան ժամանակ դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի ...

Ոսկէ դրամները երեք անուններով և վեցը չափսերով ու քաշերով են:

¼ Աշրաֆի	0.86 և 1.15 գրամ
½ Աշրաֆի	2.30 և 3.45 գրամ
Աշրաֆի	4.60 և 5.56 գրամ

Արծաթէ դրամները թողարկուել են երէք ժամանակաշրջանում:

	Հիջրի 930 – 938 թթ.	**Հիջրի 938 – 945 թթ.**	**Հիջրի 945 – 982 թթ.**
2 Ղազ	0.77 գրամ	–	–
Բիստի	1.55 գրամ	1.11 գրամ	1.15 գրամ
¼ Շահի (½ Փուլ)	–	–	0.58 գրամ
½ Շահի (1 Փուլ)	–	–	1.15 գրամ
Շահի	3.88 գրամ	2.78 գրամ	–
1 Շահի	–	–	2.3 գրամ
2 Շահի	7.77 գրամ	5.56 գրամ	4.6 գրամ

Շահ Թահմասէբ Ա. թագաւորի դրամների դարձ երեսի գրութիւնները եօթ տեսակ են, որոնցից Երևանում երկու տեսակն են թողարկուել:

Առաջին տեսակի դրամի (նկ. 5) դարձ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Արդար, կայացած, առաջնորդ, տիրակալ, յաղթող սուլթան, Սուլթան Թահմասէբ Սեֆեան Հասանի, Աստուած նրա տիրակալութիւնը յաւիտեան պահպանի, թողարկած Երևանում 941:

Երկրորդ տեսակի դրամի (նկ. 6) դարձ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Շահ Թահմասէբի արդարութիւնը, թողարկած Երևանում 962:

Շահ Իսմայիլ Բ. 1576-1578 թթ. (Հիջրի 984 – 985 թթ.) – Շահ Թահմասէբ Ա.ը վտանգ զգալով իր որդուց՝ Իսմայիլից, նրան 20 տարի փակել էր Ղահղահէ ամրոցում, որը իր հօր մահից յետոյ գահ բարձրանալով սպանել է տալիս բոլոր հարազատներին, որոնք կարող էին ինչ որ կերպ իր գահը վտանգէին, որի արդիւնքում 1,5 տարի թագաւորելուց յետոյ նրան թունաւորում են:

Շահ Իսմայիլ Բ. ի ժամանակ դրամների գրութիւնը բանաստեղծութեան տեսք են ստանում: Նա իր կարճատև թագաւորութեան ժամանակ միայն մէկ գրութիւնով դրամ է թողարկել, որից ևս թողարկուել է Երևանում:

Նրա թագաւորութեան ժամանակ արծաթէ դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի ...

Շահի	2.3 գրամ
2 Շահի	4.6 գրամ

Շահ Իսմայիլ Բ. լինելով Շիա դաւանանքի մոլեռանդ հետևորդ թոյլ չի տուել Իսլամ կրօնի կարգախօսը և 12 իմամների անունները յիշատակել դրամների վրայ, այն պատճառով, որ սոյն դրամներին կարելի էր դիպչէին ոչ մահմեդականի ձեռքը:

Դրամի դիմ երեսի գրութիւնը բանաստեղծութեան տեսքով է, որի թարգմանութիւնն է ... Արևելքից մինչև արևմուտք եթէ իմամ կայ, դա մեր համար միայն Ալին է ու նրա ժառանգները: Իսկ դարձ երեսի գրութիւնն է ... Շահ Իսմայիլ յաղթական, որդին Թահմասէբ Սեֆեան թագաւորի, Աստուած նրա տիրակալութիւնը յաւիտեան պահպանի, թողարկուած Երևանում 984 (նկ. 7):

Սուլթան Մոհամմադ Խոդաբանդէի 1578–1587 թթ. (Հիջրի 985–996 թթ.) – Շահ Իսմայիլ Բ.ին յաջորդում է նրա եղբայրը՝ Մոհամմադ Հէյդարը, որը գտնուելով Շիրազ քաղաքում մահից փրկուել էր: Նա գահ բարձրացաւ Խոդաբանդեհ, այսինքն Աստուծու ծառայ անունով:

Սուլթան Մոհամմադ Խոդաբանդէհի թագաւորութեան ժամանակ դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի ...

Ոսկէ դրամներն են:

½ Աշրաֆի	2.30 գրամ
Աշրաֆի	4.60 գրամ

Արծաթէ դրամներն են:

½ Փուլ	1.72 գրամ
Շահի	2.30 գրամ
Մոհամմադի	4.60 գրամ
3 Շահի	6.91 գրամ

Դրամների դարձ երեսի գրութիւնները չորս տեսակ են, որոնցից Երևանում մէկ տեսակն է թողարկուել:

Դրամի դարձ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Ողջոյն Իմամ Մահդիին, նրա ծառան, արդար սուլթան, յաղթող Սուլթան Մոհամմադը, Աստուած նրա տիրակալութիւնը յաւիտեան պահպանի, թողարկուած Երևանում 988 (նկ. 8):

Հարկ է նշել, որ Սուլթան Մոհամմադ Խոդաբանդէի շրջանից Մոհամմադի անունով դրամները շրջանառութեան մէջ են մտել:

Շահ Աբբաս Ա. 1587–1629 թթ. (Հիջրի 996–1038 թթ.) – Շահ Աբբաս Ա. թագաւորին յաջողեց Օսմանական կայսրութեան տիրապետութեան տակ գտնուող տարածքները հետ գրաւել, իսկ 1604 թ. մեծ թուով հայերի բռնագաղթեց Պարսկաստանի խորքերը: Շահ Աբբաս Ա.ի ժամանակ դիւանագիտական սերտ կապեր հաստատեց Եւրոպական տարբեր պետութիւնների հետ, նպատակ ունենալով հակաօսմանական դիշինք ստեղծել, որի արդիւնքում Եւրոպացի բազմաթիւ վաճառականներ սկսեցին Պարսկաստանի հետ առևտուրով զբաղուել:

Շահ Աբբաս Ա.ը խիստ համակրանք ունէր 12 իմամների հանդէպ, յատկապէս առաջին իմամին, որի համար իրեն «Քալբ-է ասթան Ալի» (کلب آستان علی) անուանեց, որը նշանակում է, Ալիի տան շեմի շունը, որը նաև օգտագործել է դրամների վրայ: Նրա հրամանով ամէն տարի Ալիի ծնունդեան օրը մեծ շուքով տօնւում էր, իսկ նրա սպանելու օրը սգո մեծ ձեռնարկներ կազմակերպում ամբողջ երկրում, որի ազդեցութիւնը մինչև օրս պահպանւել է Իրանի ժողովուրդի մօտ:

Շահ Աբբաս Ա. ի թագաւորութեան ժամանակ դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի ...

Ոսկէ դրամները չորս անուններով բայց եօթը չափսերով ու քաշերով են:

¼ Աշրաֆի	1.15 գրամ
½ Աշրաֆի	1.92 և 2.30 գրամ
Աշրաֆի	3.84 և 4.60 գրամ
2 Աշրաֆի	7.68 և 9.21 գրամ

Արծաթէ դրամները թողարկւել են երկու ժամանակաշրջանում:

	Հիջրի 996 – 1003 թթ.	Հիջրի 1003 – 1037 թթ.
Բիստի	–	0.76 գրամ
½ Շահի	1.5 գրամ	–
Շահի	2.3 գրամ	1.92 գրամ
Մոհամմադի	4.6 գրամ	3.84 գրամ
Աբբասի	9.2 գրամ	7.68 գրամ

Գահ բարձրանալու առաջին տարում թողարկած դրամների վրայ նշել է «Զել Ալլահ» (ظل الله որը նշանակում է Աստուծու ստուերը), որը թւային արժէքով դառնում է 996, որով յիշատակում է իր գահ բարձրանալու Հիջրի թւականը:

Դրամների դարձ երեսի գրութիւնները հինգ տեսակ են, որոնցից Երևանում երկու տեսակն են թողարկւել:

Առաջին տեսակի դրամի գրութեան թարգմանութիւնն է ... Այս դրամը բարեբարութեան համար թողարկեց Ալիի շուն՝ Աբբասը, թողարկւած Երևանում (նկ. 9):

Երկրորդ տեսակի դրամի դարձ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Աբբասը, Շահ-է-Վելայաթի (յիշատակութիւն է Իմամ Ալիին) ծառան, թողարկւած Երևանում 1031 (Նկ.10):

Հարկ է նշել, որ Շահ Աբբաս Ա. թագաւորի շրջանից Աբբասի անունով դրամները շրջանառութեան մէջ են մտել:

Շահ Սաֆի Ա. 1629 – 1642 թթ. (Հիջրի 1038 – 1052 թթ.) – Շահ Աբբասի հրամանով թագաժառանգ՝ Սաֆի Միրզային մահապատժի էին ենթարկել, իսկ միւս որդիներին կուրացրել էին, ուստի նրա ցանկութեամբ, իր մահից յետոյ, Սաֆի Միրզայի որդին՝ Սամ Միրազան գահ բարձրացաւ և իր հօր յիշատակին, իրեն անուանեց Շահ Սաֆի:

Նրա թագաւորութեան ժամանակ դադարում է թուրք-պարսկական պատերազմները, կնքելով Ղասր – է-Շիրինի հաշտութեան դաշինքը Մայիս 17, 1639 թ.,

որի հիման վրայ Օսմանական կայսրութիւնը ճանաչում է Երևանի խանութիւնը, որպէս Սեֆեան Պարսկաստանի տիրապետութեան տակ գտնուող տարածք, որի դիմացը ստանում է Բաղդադ քաղաքը:

Շահ Սաֆի Ա. թագաւորութեան ժամանակ դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի ...

Մէկ տեսակ ոսկէ դրամ է թողարկել:

Աշրաֆի	3.84 գրամ

Արծաթէ դրամներն են:

Բիստի	0.76 գրամ
Շահի	1.92 գրամ
Մոհամմադի	3.84 գրամ
Աբբասի	7.68 գրամ
5 Շահի	9.6 գրամ

Նրա դրամների դարձ երեսի գրութիւնները երկու տեսակ են, որոնցից երկու տեսակն էլ թողարկուել են Երևանում:

Առաջին տեսակի դրամի գրութեան թարգմանութիւնն է ... Սաֆին, ամբողջ կեանքով Շահի (յիշատակում է առաջին Իմամին) ծառան է, թողարկուած Երևանում (նկ. 11):

Երկրորդ տեսակի դրամի գրութիւնն է ... Սաֆին, Շահ-է-Վելայաթի ծառան, թողարկուած Երևանում (նկ. 12):

Շահ Սաֆի Ա. ժամանակ, Երևանի խանութիւնում թողարկուած թւակիր պղնձէ դրամներից են, դիմ երեսում լողացող ձկներ իսկ դարձ երեսի գրութիւնն է ... Ֆլուս, թողարկուած Երևանում 1045 (նկ. 13):

Շահ Աբբաս Բ. 1642 – 1666 թթ. (Հիջրի 1052 – 1077 թթ) – Շահ Աբբաս Բ. թագաւորը պատանի հասակում գահ բարձրացաւ, որի ժամանակ ծաւալուն շինարարութիւն սկսեց ամբողջ կայսրութիւնում, նաև Արևելեան Հայաստանում: Նրա դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի ...

Ոսկէ դրամներն են:

½ Աշրաֆի	1.72 գրամ
1000 Դինար (Աշրաֆի)	2.68 գրամ

Արծաթէ դրամներն են:

Բիստի	0.739 գրամ
Շահի	1.84 գրամ
Մոհամմադի	3.69 գրամ
Աբբասի	7.39 գրամ
5 Շահի	9.24 գրամ
10 Շահի	18.48 գրամ
5 Աբբասի	36.96 գրամ

Շահ Աբբաս Բ.ի Հինգ Աբբասի դրամների դիմ երեսի եզրերին 12 իմամների անունների սկզբում արաբերէնով ողջոյնի գրութիւն կայ (الهم صل على النبى), իսկ Հոսէյ-նի անունի սկիզբում «Նահատակ» (الشهيد) բառն է, որով յիշատակում է Քարբալայի պատերազմի ընթացքին տեղի ունեցած իրադարձութեանը, որը Շիա դաւանանքի հետևորդները մեծ շուքով ամէն տարի մինչև օրս սգում են:

Դրամների դարձ երեսի գրութիւնները չորս տեսակ են, որոնցից Երևանում երկու տեսակն են թողարկել:

Առաջին տեսակի դրամի գրութիւնն բանաստեղծութեան տեսքով է, որի թարգմանութիւնն է ... Աբբաս երկրորդի կամեցութեամբ և իրաւունքով, տիրակալական դրամ թողարկեց աշխարհում, թողարկած Երևանում 1059 (նկ. 14):

Երկրորդ տեսակի դրամի գրութիւնն է ... Աբբասը, Շահ-է-Վելայաթի ծառան, թողարկած Երևանում 1052 (նկ. 15):

Շահ Աբբաս Բ.ի ժամանակ, Երևանի խանութիւնում թողարկած թակիր պղնձէ դրամներից են, դիմ երեսում փղի պատկերով, իսկ դարձ երեսի գրութիւնն է ... Ֆլուս, թողարկած Երևանում 1057 (նկ. 16):

Շահ Սաֆի Բ. (Շահ Սուլէյման) 1666 – 1694 թթ. (Հիջրի 1077 – 1105 թթ.) – Շահ Աբբասին յաջորդում է նրա աւագ որդին՝ Շահ Սաֆին, որի թագաւորութեան ժամանակ ներքին խռովութիւններ է ծագում, ապա ծանր հիւանդանում է: Նրա հարազատները համոզում են նրան, որ Սաֆի անունը նրա համար չարագուշակ է, նկատի առնելով Շահ Սաֆի Ա.ի համար պատահած դժբախտութիւնները, ուստի իր անունը փոխում է Սուլէյմանի: Նա երկու անուններով էլ դրամ է թողարկել:

Շահ Սաֆի Բ. անունով դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի.

Միայն մէկ տեսակ ոսկէ դրամ է թողարկել:

Շահի	1.82 գրամ

Արծաթէ դրամներն են:

Շահի	1.84 գրամ
Մոհամմադի	3,69 գրամ
Աբբասի	7,39 գրամ
5 Աբբասի	36,96 գրամ

Շահ Սաֆի անունով դրամների դարձ երեսի գրութիւնները չորս տեսակ են, որոնցից Երևանում մէկ տեսակն է թողարկել:

Դրամի դարձ երեսի գրութիւնը պոետի տեսքով է, որի թարգմանութիւնն է ... Աբբաս երկրորդից յետոյ, Սաֆին թողարկեց տիրակալական դրամ, թողարկած Երևանում 1078 (նկ. 17):

Շահ Սուլէյման անունով դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի...

Ոսկէ դրամներն են:

Շահի	1.82 գրամ
Աշրաֆի	3.45 գրամ
Աբբասի	7.29 գրամ
5 Աբբասի	36.48 գրամ
10 Աշրաֆի	46.08 գրամ

Արծաթէ դրամներն են:

Բիստի	0.73 գրամ
Շահի	1.84 գրամ
Մոհամմադի	3.69 գրամ
Աբբասի	7.39 գրամ
2,5 Աբբասի	18.48 գրամ
5 Աբբասի	36.96 գրամ

Շահ Սուլէյման անունով դրամների դարձ երեսի գրութիւնները չորս տեսակ են, որոնցից Երևանում մէկ տեսակն է թողարկուել:

Դրամի դարձ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Սուլէյմանը, Շահ-է-Վելայաթի ծառան, թողարկած Երևանում 1083 (նկ. 18):

Շահ Սուլէյմանի ժամանակ, Երևանի խանութիւնում թողարկած թաւկիր պղնձէ դրամներից են, դիմ երեսում խոյի պատկերով, իսկ դարձ երեսի գրութիւնն է ... Ֆլուս, թողարկած Երևանում 1095 (նկ. 19):

Շահ Սուլէյմանի ժամանակ արծաթը Եւրոպայում թանգանում է և 1688 թւականից արծաթէ դրամների մեծ արտահոսք է սկսում ոչ միայն Պարսկաստանից նաև Օսմանական կայսրութիւնից և Հնդկաստանից, որի հետևանքով արծաթէ դրամների դեֆիցիտ է առաջանում: Իսկ արծաթի ներմուծման նւազելու հետևանքով մի շարք դրամահատարաններ դադարում են գործելուց և նրանց թիւը նւազում է 40-ի: Այդ ընթացքին, շրջանառութեան մէջ գտնւող արծաթէ դրամները 10 – 19 տոկոս իր անւանական արժէքից աւելի բարձր էր առք ու վաճառք լինում:

Շահ Սուլթան Հուսէյն 1694 – 1722 թթ. (Հիջրի 1105 – 1135 թթ.) – Շահ Սուլթան Հուսէյն թագաւորի ժամանակ արծաթի թանգանալու հետևանքով, որոշ դրամահատարաններում թողարկել են աւելի պակաս յարգով արծաթէ դրամներ: Իսկ կեղծ արծաթէ դրամներ թողարկողների մասին, թագաւորը հրաման է արձակել և ծանր պատիժ կարգել: Սեֆեան թագաւորութեան ամբողջ շրջանում, Երևանում թողարկած դրամների մէջ, ամենաշատը ըստ քանակի, Շահ Սուլթան Հուսէյնին են պատկանում:

Շահ Սուլթան Հուսէյնի թագաւորութեան ժամանակ դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի ...

Ոսկէ դրամներն են:

Աշրաֆի	2.88 և 3.45 գրամ
Աբբասի	5.37 գրամ

Արծաթէ դրամները թողարկուել են չորս ժամանակաշրջանում:

	Հիջրի 1105 – 1123 թթ.	Հիջրի 1123 – 1129 թթ.	Հիջրի 1129 – 1135 թթ.	Հիջրի 1133 – 1135 թթ.
Բիստի	0.73 գրամ	_	_	–
½ Շահի	_	–	0.67 գրամ	–
Շահի	1.84 գրամ	1.73 գրամ	1.34 գրամ	_
Մոհամմադի	3.69 գրամ	3.45 գրամ	2.68 գրամ	_
Աբբասի	7.39 գրամ	6.91 գրամ	5.37 գրամ	4.60 գրամ
2 Աբբասի	_	–	_	9.21 գրամ
2,5 Աբբասի	18.48 գրամ	_	13.44 գրամ	_
4 Աբբասի	_	–	_	18.43 գրամ
5 Աբբասի	36.96 գրամ	_	26.88 գրամ	_
5 Շահի	_	8.64 գրամ	_	_
6 Շահի	_	10.36 գրամ	_	_
15 Շահի	_	26.88 գրամ	_	_
30 Շահի	55.44 գրամ	_	–	_

Դրամների դարձ երեսների գրութիւնները վեցը տեսակ են, որոնցից Երևանում երկու տեսակն են թողարկուել:

Առաջին տեսակի դրամի դարձ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Դրամի տէրը Սուլթան Հոսէյնը, արևելքից ծագող արևի կամեցութեամբ աշխարհում դառաւ Ամի-ալ-մոմենինի (յիշատակում է առաջին Իմամին) շունը, թողարկուած Երևանում 1115 (նկ. 20):

Երկրորդ տեսակի դրամի գրութիւնն է ... Հիւսէյնը, Շա-է-Վելայաթի ծառան, թողարկուած Երևանում 1130 (նկ. 21):

Նա ազդուած լինելով Հնդկաստանի մոնղոլական դրամներից, թողարկել է նաև շեղանկիւն արծաթէ դրամներ տարբեր քաշերով և դարձ երեսի մէկ տեսակ գրութիւնով, որոնցից Երևանում թողարկուել է հինգ Շահի դրամը:

Շեղանկիւն դրամի դարձ երեսի գրութիւնն է ... Հիւսէյնը, Շահ-է-Վելայաթի ծառան, թողարկուած Երևանում 1125 (նկ. 22):

Շահ Սուլթան Հոսէյնի ժամանակ, Երևանի խանութիւնում թողարկուած պղնձէ դրամները ևս քանակով աւելի մեծ թիւ են կազմում:

Առաջին պղնձէ դրամի դիմ երեսը սիրամարգի պատկերով է, իսկ դարձ երեսի գրութիւնն է ... Ֆլուս, թողարկուած Երևանում 1108 (նկ. 23):

Երկրորդ պղնձէ դրամի դիմ երեսում արևն է պատկերուած մարդկային դէմքով, որը շատ տարածուած է պարսկական մշակոյթում, իսկ դարձ երեսի գրութիւնն է ... Ֆլուս, թողարկուած Երևանում 1130 (նկ. 24):

Շահ Սուլթան Հուսէյնի ժամանակ աֆղանները, Մահմուդ Աֆղանի ղեկավարութեամբ յաջողում են պարտութեան մատնելով Սեֆեան բանակին, գրաւեն Սպահան մայրաքաղաքը և գերի վերցնեն թագաւորին:

Շահ Թահմասէբ Բ. 1722 – 1731 թթ. (Հիջրի 1135 – 1144 թթ.) – Շահ Սուլթան

Հուսէյնի սպանութիւնից յետոյ, նրա որդին՝ Թահմասէբը, որը գտնւում էր Ղազվին քաղաքում, իրեն Պարսկաստանի թագաւոր հռչակեց:

Շահ Թահմասէբ Բ.ի թագաւորութեան ժամանակ դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի ...

Ոսկէ դրամներն են:

Շահի	1.15 գրամ
Աշրաֆի	3.45 գրամ
Աբբասի	5.37 գրամ
10 Աշրաֆի	34.56 գրամ

Արծաթէ դրամներն են:

Բիստի	0.53 գրամ
Շահի	1.34 գրամ
Մոհամմադի	2.68 գրամ
Աբբասի	5.37 գրամ
2,5 Աբբասի	13.44 գրամ
5 Աբբասի	26.88 գրամ

Դրամների դարձ երեսի գրութիւնները չորս տեսակ են, որոնցից Երևանում մէկ տեսակն է թողարկել:

Դրամի դարձ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Թահմասէբ երկրորդի կամեցութեամբ և իրաւունքով տիրակալական դրամ հատուեց աշխարհում, թողարկած Երևանում (նկ. 25):

Շահ Թահմասէբ Բ.ի ժամանակ, Երևանի խանութիւնում թողարկված թակիր պղնձէ դրամներից են, դիմ երեսում քայլող առիւծի պատկերով է, իսկ դարձ երեսի գրութիւնն է ... ֆլուս, թողարկված Երևանում 1136 (նկ. 26):

Շահ Աբբաս Գ. 1731–1735 թթ. (Հիջրի 1144–1148 թթ) – Շահ Թահմասէբ Բ.ի բանակի հրամանատար՝ Նադիր Ղոլի Աֆշարը նրան գահից հեռացնելով, որդուն՝ Շահ Աբբաս Գ.ին որը մի քանի ամսական երեխայ էր, թագաւոր է հռչակում և ինքը դառնում թագաւորի խնամակալը:

Շահ Աբբաս Գ. թագաւորութեան ժամանակ դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի ...

Ոսկէ դրամներն են:

Աշրաֆի	3.45 գրամ
2 Աշրաֆի	5.37 գրամ

Արծաթէ դրամներն են:

Բիստի	0.53 գրամ
Շահի	1.34 գրամ
Մոհամմադի	2.68 գրամ
Աբբասի	5.37 գրամ

Երևանում դրամ թողարկած վերջին Սեֆեան թագաւորն է: Նրա դրամների դարձ երեսի գրութիւնները երկու տեսակ են, որոնցից Երևանում մէկ տեսակն է թողարկել:

Դրամի դարձ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Կամեցութեամբ Աստուծու, Աբբաս երրորդը ոսկուց տիրակալական դրամ հատեց, թողարկած Երևանում 1148 (նկ. 27):

Բ) Աֆշար թագաւորութիւն

Շահ Աբբաս Գ. թագաւորի բանակի հրամանատար՝ Նադիր Ղոլին 1735 թ. յաջողում է վերջ տալ Պարսկաստանի ներքին խռովութիւններին և աֆղանական, օսմանական ու ռուսական բանակներին հեռացնել Պարսկաստանի կայսրութեան սահմաններից, ապա Մուղանի դաշտում թագադրւում է և իրեն հռչակում Նադիր Շահ, որին ներկայ էին Ղարաբաղի մելիքները և Ամենայն Հայոց կաթողիկոս՝ Աբրահամ Գ. Կրետացին (1734 – 1737 թթ.):

Նադիր Շահ 1735 – 1747 թթ. (Հիջրի 1148 – 1160 թթ.) – Պարսիկ պատմաբանները Նադիր Շահին յիշատակում են, որպէս մի տիրակալ, որը երկիրը ձիան թամբից էր ղեկավարում, որովհետև նա իր ամբողջ կեանքը անց է կացրել պատերազմների մէջ:

Նադիր Շահը դրամ է թողարկել երկու ժամանակներում: Նախ այն ժամանակ երբ Սեֆեան բանակի հրամանատարն էր, որը Սեֆեան դրամների նման յիշատակել է Շիա դաւանանքի կարգախօսը և 12 իմամների անունները: Սոյն դրամով նպատակ է ունեցել ապագայ իր գործունէութիւնը օրինականացնել, ներկայացնելով իրեն, որպէս Սեֆեան գահի ժառանգ, իսկ գահ բարձրանալով դրամների գրութիւնները ամբողջովին փոխել են և Սասանեան կայսրութիւնից յետոյ, առաջին անգամ նրա դրամների վրայ յիշատակել է «Իրան» անունը:

Նադիր Շահի թագաւորութեան ժամանակ դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի ...

Ոսկէ դրամներն են:

Աշրաֆի	3.45 գրամ
3 Աշրաֆի	10.36 գրամ

Հնդկաստանը գրաւելուց յետոյ, այնտեղ թողարկել է ոսկէ դրամներ, որոնք համընկնում են սոյն երկրի ոսկէ դրամների քաշերին, ըստ հետևեալի ...

Աշրաֆի	11.4 գրամ
2 Աշրաֆի	22.8 գրամ

Արծաթէ դրամները թողարկել են երկու ժամանակաշրջանում:

	Հիջրի 1148 – 1150 թթ.	**Հիջրի 1150 – 1160 թթ.**
Բիստի	0.54 գրամ	–
Շահի	1.34 գրամ	1.5 գրամ

Մոհամմադի	2.68 գրամ	2.30 գրամ
Աբբասի	5.37 գրամ	4.60 գրամ
6 Շահի	–	6.91 գրամ
Ռուփի (Նադերի)	–	11.52 գրամ
Հազար Դինար	–	23.04 գրամ

Ռուփի և Հազար Դինար դրամները թողարկել են Հնդկաստանը գրաւելուց յետոյ:

Սեֆեան բանակի հրամանատարութեան շրջանում մէկ տեսակ դրամ, իսկ թագաւորական շրջանում եօթը տեսակ դրամներ է թողարկել: Երևանում միայն թագաւորութեան շրջանի դրամներից մէկ տեսակն է թողարկել:

Դրամի դիմ երեսի գրութիւնը պարսկերէնով և արաբերէնով է, որի բառացի թարգմանութիւնն է ... Թուականին, տեղի ունեցածը բարի է: Իսկ սոյն գրութեան տառերի թային արժէքը դառնում է ... 1148 թուականին, որը նրա թագադրման թուականն է: Դրամի դարձ երեսի գրութիւնը բանաստեղծութեան ձևով է, որի թարգմանութիւնն է ... Իրան երկրի աշխարհակալ թագաւոր Նադիրը, թողարկելով ոսկէ դրամ, իր թագաւորութիւնը յայտարարեց աշխարհին, թողարկած Երևանում 1148 (նկ. 28):

Շահրոխ թագաւոր 1748–1796 թթ. (Հիջրի 1161–1210 թթ.) – Նադիր Շահի սպանուելուց յետոյ, սկսում է գահակալական պատերազմներ: Աֆշար տոհմից երէք հոգի մէկ տարում գահ են բարձրանում, որոնցից Նադիր Շահի թոռան՝ Շահրոխին յաջողում է պահպանել իշխանութիւնը, բայց նա կորցնում է ժառանգած տարածքների մեծ մասը և սահմանափակւում միայն Խորասան նահանգով:

Շահրոխի թագաւորութեան ժամանակ դրամների անունները և նրանց քաշերն են ըստ հետևեալի ...

Ոսկէ դրամներն են:

¼ Աշրաֆի	0.86 և 1.15 գրամ
Աշրաֆի	3.45 գրամ
2,5 Աշրաֆի	11.52 գրամ

Արծաթէ դրամներն են:

Շահի	1.15 գրամ
Աբբասի	4.6 գրամ
300 Դինարի	6.91 գրամ
10 Շահի (Ռուփի)	11.52 գրամ
Հազար Դինար	23.04 գրամ

Նա թողարկել է վեցը տեսակ դրամներ, որոնց դիմ երեսի գրութիւնը վերադարձ է Սեֆեան շրջանի դրամներին: Նրա դրամներից Երևանում մէկ տեսակն է թողարկել:

Դրամի դարձ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Շահրոխը Ռեզայի (ութերորդ իմամի մականունն է) տան շեմի շունը, Աստուծու հրամանով դրամ թողարկեց աշխարհում, թողարկած Երևանում 1164 (նկ. 29):

Շահրոխ թագաւորի ժամանակ, Երևանի խանութիւնում թողարկուած թւակիր պղնձէ դրամներից են, դիմ երեսը առիւծի և արևի պատկերով, իսկ դարձ երեսի գրութիւնն է ... Թողարկուած Երևանում 1204 (նկ. 30):

Գ) Ներքին խռովութիւնների ժամանակաշրջան

Երբ Նադիր Շահի ժառանգները պայքարում էին գահի համար, բազմաթիւ խաներ իրենց անկախ հռչակեցին, որոնցից ամէնահզորներն էին, Ազադ խան Խալզային, Մոհամմադ Հասան խան Ղաջարը և Քարիմ խան Զանդը, որոնք ինը տարի իրար հետ պատերազմելուց յետոյ, վերջապէս Քարիմ խանը Զանդը յաղթեց:

Այդ ժամանակաշրջանում միայն Մոհամմադ Հասան խանն է Երևանում դրամ թողարկել:

Մոհամմադ Հասան խան Ղաջար 1750 – 1759 թթ. (Հիջրի 1163 – 1172 թթ.) – Նադիր Շահի ժամանակ Մոհամմադ Հասան խանը Կասպից ծովի հարաւային տարածքների կառավարիչն էր: Նա 1750 թ. իրեն Պարսկաստանի թագաւոր հռչակեց, բայց 1759 թ. Քարիմ խանից պարտութիւն կրելով, սպանուեց:

Նա այդ ինը տարւայ ընթացքին թողարկել է ոսկուց և արծաթից դրամներ, որոնց անունները և քաշերն են ըստ հետևեալի ...

Ոսկէ դրամներն են:

¼ Աշրաֆի	2.76 գրամ
Աշրաֆի	11.04 գրամ

Արծաթէ դրամներն են:

Մոհամմադի	2.3 գրամ
Աբբասի	4.6 գրամ
10 Շահի	11.52 գրամ

Թողարկել է երկու տեսակ գրութիւնով դրամներ, որոնցից մէկ տեսակն է թողարկուել Երևանում: Նրա դրամի դիմ երեսը Սեֆեան դրամների նման է իսկ դարձ երեսի գրութեան թարգմանութիւնն է... Աստուծու օրհնութեամբ, ոսկուց արդարութեան դրամ թողարկեց Ալիի որդու Մուսա Ռեզայի (ութերորդ իմամն է) անունով, թողարկուած Երևանում 1164 (նկ. 31):

Դ) Զանդ թագաւորութիւն

Քարիմ խան Զանդը յաղթելով իր հակառակորդներին դառաւ Պարսկաստանի տիրակալ: Հարկ է նշել, որ նա չի օգտուել Շահ անւանումը իր դրամների վրայ: Սոյն տոհմից միայն Քարիմխան թագաւորն է Երևանում դրամ թողարկել:

Քարիմխան թագաւոր 1750 – 1779 թթ. (Հիջրի 1163 – 1193 թթ.) – Քարիմխանի թագաւորութեան ժամանակ դրամների անունները և քաշերն են ըստ հետևեալի ...

Ոսկուց դրամներն են:

¼ Աշրաֆի	2.76 գրամ
½ Աշաֆի	5.52 գրամ
Աշրաֆի	11.04 գրամ

Արծաթէ դրամներն են:

Շահի	1 և 1.15 գրամ
2 Շահի	2.01 գրամ
Սանարի	2.30 գրամ
3 Շահի	3.02 գրամ
Աբբասի	4.03 և 4.60 գրամ
6 Շահի	6.91 գրամ
2 Աբբասի	9.21 գրամ
10 Շահի	11.52 գրամ

Քարիմխան թագաւորի դրամների դիմ երեսի գրութիւնը երկու տեսակ են: Մի տեսակը կրկնում է Սեֆեան դրամների դիմ երեսի գրութիւնը, իսկ միւս տեսակը յիշատակում է նրա անունը և թողարկման վայրը:

Դարձ երեսի գրութիւնները ևս երկու տեսակ են, որոնցից Երևանում թողարկուել է մէկ տեսակը: Երևանում թողարկուել են թէ ոսկուց և թէ արծաթից դրամներ, միանման գրութիւնով:

Դրամի դիմ երեսի գրութիւնն է ... Ով դու Քարիմ, թողարկած Երևանում: Իսկ դարձ երեսի գրութիւնը բանաստեղծութեան տեսքով է, որի թարգմանութիւնն է ... Օրինական իմամ Զամանի (վերջին իմամի մականունն է) դրամից աշխարհում դառաւ արև, լուսին և ոսկի (նկ. 32):

Ե) Ղաջար թագաւորութիւն

Աղա Մոհամեդ խանը սպանելով Զանդ տոհմի վերջին թագաւոր՝ Լոթֆ Ալի խանին, հիմնեց Ղաջար թագաւորութիւնը: Իսկ նրա սպանուելուց յետոյ Շուշի բերդում 1797 թ., եղբոր որդին՝ Ֆաթհ Ալի Շահը գահ բարձրացաւ, որը Երևանում դրամ թողարկած Պարսկաստանի վերջին թագաւորն է, որովհետև 1828 թ. Թուրքմէնչայի պայմանագրով Արևելեան Հայաստանը անցաւ Ռուսական կայսրութեան տիրապետութեան տակ:

Ղաջար թագաւորների մէջ ամենագեղեցիկ և բազմազան դրամները թողարկուել են Ֆաթ Ալի Շահի ժամանակ:

Ֆաթհ Ալի Շահ 1797 – 1835 թթ. (Հիջրի 1212 – 1250 թթ.) – Նրա թագաւորութեան սկզբնական շրջանում դրամների վրայի գրութիւնները ազդուած են եղել Սեֆեան շրջանի դրամներից, ապա նրանց ոճը փոխուել է և հետևելով Նադիր Շահի դրամներին, նրանց դիմ երեսում ներկայացրել է իրեն, իսկ դարձ երեսում նշել թողարկման վայրը և թիւը:

Ֆաթհ Ալի Շահ թագաւորութեան ժամանակ դրամների անունները և քաշերն են ըստ հետևեալի ...

Ոսկէ դրամները թողարկուել են հինգ ժամանակաշրջանում:

	Հիջրի 1213 – 1216 թթ.	Հիջրի 1220 – 1224 թթ.	Հիջրի 1224 – 1227 թթ.	Հիջրի 1227 – 1229 թթ.	Հիջրի 1230 – 1246 թթ.
Ռոբի	–	1.44 գրամ	1.34 գրամ	1.2 գրամ	1.15 գրամ
5 հազարի	3.07 գրամ	2.88 գրամ	2.68 գրամ	2.4 գրամ	2.3 գրամ
1 թումանի	6.14 գրամ	5.76 գրամ	5.37 գրամ	4.8 գրամ	4.6 գրամ
3 թումանի	–	17.28 գրամ	–	–	13.82 գրամ
4 թումանի	–	–	–	19.2 գրամ	–
5 թումանի	–	28.8 գրամ	26.88 գրամ	24 գրամ	23.04 գրամ
50 թումանի	–	–	–	–	230.4 գրամ
100 թումանի	–	–	–	–	460.8 գրամ

Արծաթէ դրամները թողարկուել են հինգ ժամանակաշրջանում:

	Հիջրի 1212	Հիջրի 1212 – 1218 թթ.	Հիջրի 1219 – 1232 թթ.	Հիջրի 1232 – 1241 թթ.	Հիջրի 1241 – 1250 թթ.
Սպիտակ Շահի	1.43 գրամ	–	1.29 գրամ	–	–
2 Շահի	0.83 գրամ	–	–	–	–
Աբբասի	–	1.65 գրամ	1.65 գրամ	1.47 գրամ	–
2,5 Շահի	–	1.03 գրամ	–	–	0.86 գրամ
5 Շահի	–	2.07 գրամ	–	1.84 գրամ	1.72 գրամ
10 Շահի	–	4.14 գրամ	–	–	3.45 գրամ
¼ Ռիալի	2.87 գրամ	–	2.59 գրամ	–	–
½ Ռիալի	5.76 գրամ	5.18 գրամ	5.18 գրամ	4.6 գրամ	–
Ռիալ	11.52 գրամ	10.36 գրամ	10.36 գրամ	9.21 գրամ	–
Սահէբդա-ման	–	–	–	–	6.91 գրամ

Ֆաթհ Ալի Շահը թագաժառանգ ժամանակ Թաւրիզում թողարկել է Բաբա խան անունով երկու տեսակ դրամներ, ապա գահակալութեան առաջին տարում Սպահան քաղաքում թողարկած դրամներում իրեն ներկայացրել է Բաբա Շահ անունով, որից յետոյ օգտուելով Ֆաթ Ալի Շահ անունը թողարկել է վեցը տեսակի գրութիւններով դրամներ, որոնցից Երևանում երեք տեսակն են թողարկուել: Երևանում նաև թողարկել է ոսկուց մէկ տեսակ դրամ:

Ոսկէ դրամի դիմ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Սուլթանների Սուլթան Ֆաթհ Ալի Շահ Ղաջար: Իսկ դարձ երեսի գրութիւնն է... Թողարկուած Զուխուր Սաըդում, Երևան 1239 (նկ. 33):

Առաջին տեսակի արծաթէ դրամի գրութիւնը, ոսկէ դրամի կրկնութիւնն է (Նկ.34):

Երկրորդ տեսակի դրամի դիմ երեսի գրութեան թարգմանութիւնն է ...Սուլթան Ֆաթհ Ալի Շահ Ղաջար: Իսկ դրամի դարձ երեսի գրութիւնն է ... Թողարկուած Երևանում 1216 (նկ. 35):

Երրորդ տեսակի դրամի դիմ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Ֆաթհ Ալի շահ թագաւորի տիրակալական դրամ: Իսկ դրամի դարձ երեսի գրութիւնն է ... Թողարկած Չուխուր Սաըդում, Երևանում 1241 (նկ. 36):

Առաջին անգամ Պարսկական չորս շրջանների դրամներում հանդիպում ենք Չուխուր Սաըդ անունին: Ֆաթհ Ալի Շահի ժամանակ, Երևանի խանութիւնում թողարկել են վերջին խանութեան դրամները:

Առաջին պղնձէ դրամի դիմ երեսում առիւծ և արև է պատկերուած, իսկ դարձ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Թողարկած Երևանում, 1240 (նկ. 37):

Երկրորդ պղնձէ դրամի դիմ երեսում առիւծ և արև է պատկերուած, որի ներքևում նշուած է 1821: Դարձ երեսի գրութեան թարգմանութիւնն է ... Թողարկած Երևանում (նկ. 38):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲԻՒՐՆԵՐ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Abdullah A., Iranian mints during Islamic period, Tehran, 1998.

Ali Akbar S., Feridoun Avarzamani, Iranian coins, Tehran, 2000.

Bahram A., Persian copper coins from Safavids to Qajar, Tehran, 2013.

Farzaneh G., Coins of Safavid epoch, Tehran, 2009.

Hushang F., Iranian hammered coinage 1500 – 1879 AD, Berlin, 1975.

Javad M. D., Religious themes and motifs on the coins of Afsharid dynasty, Tehran, 2019.

Rudolph P. M., translated by Hassan Zandieh, Safavid economy and foreign policy, Ghom, 2008.

Shahen Hovsepian
shahenhovsepian@gmail.com

IRANIAN COINS STRUCK IN YEREVAN

Keywords. Persia, Safavid, Afsharid, Zand, Qajar, Yerevan, Shi'ism.

Iran struck coins in Yerevan during four periods from 1555 to 1826. Safavid dynasty was the first who started to strike coins in Yerevan. The obverse of their coins mentioned Shahada in Arabic and the names of 12 Imams. On the reverse side of coins introducing the king and his dedication to the first Imam of Shia religion in Farsi language, which used for the first time on Iranian coins after Sassanid dynasty.

Shah Tahmaseb I of Safavid established mint of Yerevan Khanate which struck Safavid coins up to Shah Abbas III. Copper coins struck by local khans in Yerevan as well, which mentioned the name of mint and date on it only.

Nader Ghuli who was Safavid's army commander succeeded to finish chaos on inside of country and announced himself as Nader Shah, therefore Afsharid dynasty started to lead the country. Nader Shah struck coins in Yerevan and for the first time after Sassanid dynasty mentioned the name of Iran on his coins.

Chaos started when Nader Shah was killed and finally his grandson Shahrukh succeeded to be the king but only on Khorasan territory. He struck coins in Yerevan which obverse of coins are look like Safavids coins. Powerful khans in Iran started to fight with each other to obtain the crown of Iran, which takes nine years and Karim Khan Zand won. During the civil war, Mohammad Hassan khan Qajar struck coins in Yerevan only.

Karim khan Zand started to lead the country and he struck coins in gold and silver in Yerevan. After Karim khan's death, his successors could not control the country, and Agha Mohammad Khan Qajar rebel against of Zands and succeeded to be the king of Iran. Fath Ali Shah Qajar become the king of Iran after Agha Mohammad Khan killed, and he was the last Iranian king who struck coins in Yerevan.

Шаэн Овсепян
shahenhovsepian@gmail.com

ПЕРСИДСКИЕ МОНЕТЫ ВЫПУЩЕННЫЕ В ЕРЕВАНЕ

Ключевые слова: Персия, Сефевидский, Афшары, Зенд, Каджар, Ереван, Шиа.

Начиная с 1555 года до 1826 года, в течении четерых периодов, Персия выпускала свои монеты в Ереване. Сефевидские шахи были первыми, которые начали чеканить монеты в Ереване, на лицевой стороне которых была Шахада (Свидетельство веры) Исламской религии и 12 имен Шиитских имамов. На оборотной стороне монет упоминалось имя шаха и его посвящение первому Имаму Шиитской религии. На Сефевидских монетах, впервые, после падения Сасанидской империи, надписи были на персидском языке.

По приказу шаха Тахмаспа I был построен монетный двор Еревана, где чеканка сефевидских монет продолжалась вплоть до Шаха Аббаса III. В монетном дворе Еревана чеканились также ханские медные монеты, на которых были отмечены место и время выпуска.

После убийства шаха Султана Хусейна, Надир Голи (Кули), который был командующим сефевидской армии, смог положить конец внутренним восстаниям, и провозгласил себя Надир шахом, после чего Персией стала править династия Афшаридов. Он чеканил монеты в Ереване и, впервые после падения Сасанидской империи, на монетах появилось название Иран.

После убийства Надира шаха начались внутренные беспорядки и, в конце концов, его внук Шахрох смог подняться на престол. Он потерял, однако, большую часть страны и ограничился только территорией Хорасана. Он тоже выпускал монеты в Ереване. Во время борьбы за власть, которая длилась девять лет, ханы воевали друг против друга за престол Персии. В этой борьбе победил Карим хан Зенд. Во время междоусобных войн, в Ереване чеканил монеты только Мухаммед Хасан-хан Каджар.

Из династии Зенд только Карим хан чеканил монеты в Ереване. После его смерти правление страной перешло к Ага-Мохаммед-хан Каджару, который отстранил династию Зенд и стал правителем Персии. После его убийства, на престол Персии поднялся Фатх Али шах Каджар, который и был последним правителем Персии, который выпускал монеты в Ереване. В надписях этих монет упоминаются его имя и титулы.

Շահէն Յովսէփեան

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ՝ ԹՈՂԱՐԿՈՒԱԾ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Պղնձէ դրամներ

Ֆլուս	= 1 Դինար	½ Ղազ	= 2.5 Դինար
Ղազ Բէյգի	= 5 Դինար	2 Ղազ	= 10 Դինար

Արծաթէ դրամներ

2 Ղազ	= 10 Դինար	¼ Շահի (½ Փուլ)	= 12.5 Դինար
Բիստի	= 20 Դինար	½ Շահի (1 Փուլ)	= 25 Դինար
Շահի	= 50 Դինար	2 Շահի	= 100 Դինար
Մոհամադի	= 100 Դինար	Սանարի	= 100 Դինար
Աբբասի	= 200 Դինար	5 Շահի	= 250 Դինար
6 Շահի	= 300 Դինար	300 Դինարի	= 300 Դինար
2 Աբբասի	= 400 Դինար	2.5 Աբբասի	= 500 Դինար
Ռուփի (Նադերի)	= 500 Դինար	10 Շահի (Ռուփի)	= 500 Դինար
10 Շահի	= 500 Դինար	15 Շահի	= 750 Դինար
5 Աբբասի	= 1000 Դինար	Հազար Դինար	= 1000 Դինար
30 Շահի	= 1500 Դինար		

Ոսկէ դրամներ

Աբբասի	= 200 Դինար	¼ Աշրաֆի	= 250 Դինար
2 Աբբասի	= 400 Դինար	½ Աշրաֆի	= 500 Դինար
4 Աբբասի	= 800 Դինար	Աշրաֆի	= 1000 Դինար
2 Աշրաֆի	= 2000 Դինար	3 Աշրաֆի	= 3000 Դինար
10 Աշրաֆի	= 10000 Դինար		

Նկ.1. Սեֆեան, Աֆշար և Զանդ դրամների անունները ու նրանց արժոյթները (Hushang Farahbakhsh)

Պղնձէ դրամներ

Ֆլուս	= 0.5 Դինար	Ղազ	= 5 Դինար
2 Ղազ	= 10 Դինար		

Արծաթէ դրամներ

Սպիտակ Շահի (Շահի)	= 50 Դինար	2 Շահի	= 100 Դինար
Աբբասի	= 200 Դինար	2.5 Շահի	= 125 Դինար
5 Շահի	= 250 Դինար	10 Շահի	= 500 Դինար
¼ Ռիալի	= 312.5 Դինար	½ Ռիալի	= 625 Դինար
Ռիալ	= 1250 Դինար	Սահէբղարան	= 1000 Դինար

Ոսկէ դրամներ

Ռոբի	= ¼ Թումման	5 հազարի	= ½ Թումման
1 Թումանի	= 1 Թումման	3 Թումանի	= 3 Թումման
4 Թումանի	= 4 Թումման	5 Թումանի	= 5 Թումման
50 Թումանի	= 50 Թումման	100 Թումանի	= 100 Թումման

Նկ.2. Ղաջար դրամների անուններն ու նրանց արժոյթները (Hushang Farahbakhsh)



Նկ.3. Սեֆեան դրամների շրջանակները և վարպետների ստորագրությունները (Ali Akbar Sarfaraz, Feridoun Avarzamani)

Նկ.4. Սեֆեան դրամների դիմ երեսի երկու տեսակի գրությունները (https://zeno.ru/)

Նկ.5. Շահ Թահմասպ Ա.ի դրամը, 2 Շահի Հ.941/1535 թ. 6.12 գ, 18.5 մմ AR (https://zeno.ru/)

Նկ.6. Շահ Թահմասպ Ա.ի դրամը, Բիսպի Հ.962/1555 թ. W1.15g D12.1mm AR (https://zeno.ru/)

Նկ.7. Շահ Իսմայիլ Բ. դրամը, Հիջրի 984/1576 թ. AR (https://zeno.ru/)

Նկ.8. Սուլթան Մոհամմադ Խոդաբանդէի դրամը, Մոհամմադի Հ.988/1580 թ. W4.42g D20mm AR (https://zeno.ru/)

Նկ.9. Շահ Աբբաս Ա.ի դրամը AR (https://zeno.ru/)

Նկ.10. Շահ Աբբաս Ա.ի դրամը, Աբբասի Հ.1031/1622 թ. W7.6g D20mm AR (Էդիկ Յովհաննիսեան)

Նկ.11. Շահ Սաֆի Ա.ի դրամը, Աբբասի W7.69g D19mm AR (https://zeno.ru/)

Նկ.12. Շահ Սաֆի Ա.ի դրամը, Աբբասի W7.7g D20mm AR (https://zeno.ru/)

Նկ.13. Շահ Սաֆի Ա.ի ժամանակ թողարկված պղնձէ դրամը, Ֆլուս Հիջրի 1045/1635 թ. AE (https://zeno.ru/)

Նկ.14. Շահ Աբբաս Բ.ի դրամը, Աբբասի Հ.1059/1649 թ. W7.3g D26mm AR (Էդիկ Յովհաննիսեան)

Նկ.15. Շահ Աբբաս Բ.ի դրամը, Աբբասի Հ.1052/1642 թ. W7.16g D23mm AR (https://zeno.ru/)

Նկ.16. Շահ Աբբաս Բ.ի ժամանակ թողարկուած պղնձէ դրամը, Ֆլոս Հ.1057/1647 AE (https://zeno.ru/)

Նկ.17. Շահ Սաֆի Բ.ի դրամը, Աբբասի Հ.1078/1667 թ. W7.30g D20mm AR (https://zeno.ru/)

Նկ.18. Շահ Սուլէյմանի դրամը, Աբբասի Հ.1083/1672 թ. W7.40g D22.5mm AR (Էդիկ Յովհաննիսեան)

Նկ.19. Շահ Սուլէյմանի ժամանակ թողարկուած պղնձէ դրամը, Ֆլոս Հ.1095/1684 թ. W8.40g D20.2mm AE (Բահրամ Ալլաէդին)

Նկ.20. Շահ Սուլթան Հուսէյնի դրամը, Աբբասի Հ.1115/1703 թ. W7.33g D22.5mm AR (https://zeno.ru/)

Նկ.21. Շահ Սուլթան Հուսէյնի դրամը, Աբբասի Հ.1130/1717 թ. W5.3g D24mm AR (Էդիկ Յովհաննիսեան)

Նկ.22. Շահ Սուլթան Հուսէյնի շեղանկիւն դրամը, 5 Շահի Հ.1125/1713 թ. W8.6g D17x24mm AR (Էդիկ Յովհաննիսեան)

Նկ.23. Շահ Սուլթան Հուսէյնի ժամանակ թողարկուած պղնձէ դրամը, Ֆլոս Հ.1108/1697 թ. AE (https://zeno.ru/)

Նկ.24. Շահ Սուլթան Հուսէյնի ժամանակ թողարկված պղնձէ դրամը, Ֆլրաս Հ.1130/1718 թ. W8.95gr D20mm AE (https://zeno.ru/)

Նկ.25. Շահ Թահմասէբ Բ.ի դրամը, Աբբասի W5.8g D22mm AR (Էդիկ Յովհաննիսեան)

Նկ.26. Շահ Թահմասէբ Բ.ի ժամանակ թողարկված պղնձէ դրամը, Ֆլրաս Հ.1136/1724 թ. W8.6g D23mm AE (https://zeno.ru/)

Նկ.27. Շահ Աբբաս Գ.ի դրամը, Շահի Հ.1148/1735 թ. W1.31 gr D21.5mm AR (https://zeno.ru/)

Նկ.28. Նադիր Շահի դրամը, Հիջրի 1148/1735 թ. AR (ՀՀ Պարմութեան թանգարան)

Նկ.29. Շահրոխի դրամը, Հիջրի 1164/1751 թ. AR (https://zeno.ru/)

Նկ.30. Շահրոխի ժամանակ թողարկված պղնձէ դրամը, Ֆլրաս Հ.1204/1790 թ. W8.58gr D19x21mm AE (https://zeno.ru/)

Նկ.31. Մոհամմադ հասան խանի դրամը, Հիջրի 1164/1751 թ. AR (https://zeno.ru/)

Նկ.32. Քարիմ խան թագաւորի դրամը AV (https://zeno.ru/)

Նկ.33. Ֆաթհ Ալի Շահի դրամը, 1 Թուման Հիջրի 1239/1824 թ. W4.59gr AV (https://zeno.ru/)

ԱՀԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ